ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1916 «06» 09 2021թ.

Ձեր

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջական միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «Աշյա» ՍՊԸ-ի միջև 16.02.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2021-ՍՀԳ/ԱՐԱՐԱՏ ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ընկերությունը ստանձնվել է իրականացնելու ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի ՈԲ-ում սանհանգույցի ընթացիկ նորոգման աշխատանքները, շինարարական աշխատանքների կատարման ժամկետը ըստ պայմանագրի մաս հանդիսացող հավելված N 1-ով սահմանվել է համաձայնագիրը (թիվ 1 համաձայնագիրը կնքվել է 24.05.2021թ. ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2021-ՍՀԳ/ԱՐԱՐԱՏ) ուժի մեջ մտնելուց 45 օր հետո, 20 օրացուցային օրվա ընթացքում, որի ավարտը օգոստոսի 24-ն է:

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության կողմից «Աշյա» ՍՊԸ-ին՝ 03.08.2021թ. թիվ 27/939 գրությունով նախազգուշացվել է աշխատանքները սահմանված ժամկետում ավարտին հասցնելու համար, իսկ 17.08.2021թ. թիվ 27/1022 գրությունով սահմանվել է ողջամիտ ժամկետ՝ 10 օրացուցային օր պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կերպով իրականացնելու համար, սակայն աշխատանքները ավարտին հասցնելու համար միջոցներ չեն ձեռնարկվել մինչ օրս:

31.08.2021թ-ի դրությամբ ուշացված աշխատանքային օրերը կազմում են 7 օր և համաձայն՝ 16.02.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2021-ՍՀԳ/ԱՐԱՐԱՏ ծածկագրով գնման պայմանագրի 6-րդ կետի 6.2 ենթակետի պահանջներից ելնելով՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը կազմում

նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, որը կազմում է 4.250 դրամ: Հարկ է նշել, որ պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, 2.1.3 ա) և բ) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի ամբողջապես լուծում է պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերություն՝ տուժանքի համաձայանգրի տեսքով որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 850000 (ութ հարյուր հիսուն հազար) և 85000 (ութսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900008000698 և N 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Աշյա» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ,գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Ոստիկանության

գնդապետ **Կ.Ցուցույան**